ԼՅՈՒԴՎԻԳ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ

Դասընթացի ծրագիր և մեթոդական ուղեցույց

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

1919

YEREVAN STATE UNIVERSITY

**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ**
**YEREVAN STATE UNIVERSITY**

**ЛЮДВИГ ВАРДАНЯН**

# ПОЛИТИЧЕСКАЯ **КУЛЬТУРА**

*(Программа учебного курса и методические указания)*

**LYUDVIG VARDANYAN**

# POLITICAL CULTURE

*(Couese syllabus and methodological guide)*

**YSU Publishing House**
**Издательство ЕГУ**
**Yerevan – 2017 - Ереван**

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԼՅՈՒԴՎԻԳ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ

*(Դասընթացի ծրագիր և մեթոդական ուղեցույց)*

Երևան
ԵՊՀ հրատարակչություն
2017

ՀՏԴ 32.001(072)
ԳՄԴ 66.0
Վ 301

*Հրապարակվել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ*

**Հեղինակ՝ փ.գ.թ., դոցենտ Լ. Գ. Վարդանյան**

Վ 301 **Քաղաքական մշակույթ** (Դասընթացի ծրագիր և մեթոդական ուղեցույց) / Հեղինակ՝ Լ. Գ. Վարդանյան, - Եր., ԵՊՀ հրատ., 2017, 96 էջ:

**Политическая культура** (Программа учебного курса и методические указания) / Автор: Л. Г. Варданян. – Ер.: Издательство ЕГУ, 2017, 96 с.

**Political culture** (Couese syllabus and methodological guide)/ Author: L. G. Vardanyan. – Yerevan: YSU Publishing House, 2017, 96 p.

«Քաղաքական մշակույթ» դասընթացի ուսումնական ծրագիրը մշակվել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի և քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի կողմից ներկայացված կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան: Այն նախատեսված է «Քաղաքագիտություն», «Միջազգային հարաբերություններ», «Հանրային կառավարում» բաժիններում ընդգրկված ուսանողների և առհասարակ քաղաքական մշակույթի հիմնախնդիրներով հետաքրքրվողների համար:

«Քաղաքական մշակույթ» դասընթացի ուսումնական ծրագրի խնդիրն է կազմակերպել և իրացնել բարձրագույն քաղաքագիտական կրթություն: Ներկայացված ծրագիրը դասախոսի և ուսանողի համատեղ ուսումնական գործունեության շրջանակներում հանդես է գալիս որպես գիտելիքի յուրացման, նոր տեղեկատվության և գործնական կողմնորոշումային հմտությունների ուղեցույց:

Ուսումնասիրվող դասընթացի հիմնական նպատակն է ձևավորել զարգացած քաղաքական մտածողությամբ քաղաքացի և պրոֆեսիոնալ քաղաքագետ:

ՀՏԴ 32.001(072)
ԳՄԴ 66.0

ISBN 978-5-8084-2244-5

© ԵՊՀ հրատ., 2017
© Վարդանյան Լ., 2017

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ ..... 7

ԲԱԺԻՆ 1.
ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ..... 11
1.1. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ ..... 11
1.2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ..... 14
1.3.ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՂԸ ՍՈՑԻՈՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ..... 16
1.4. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ..... 17
Ա. Ըստ վերլուծական իրազեկության՝ կապված տեղեկատվության և գիտելիքի կառավարման հետ ..... 17
Բ. Ըստ հաղորդակցային իրազեկության ..... 18
1.5. ԿՐԹԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ (ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ) ..... 18
1.6. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՅՈՒՐԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ..... 19
1.6. ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԸՆԹԱՑԻԿ ՁԵՎԵՐԸ ..... 21

ԲԱԺԻՆ 2.
ԴԱՍԸՆԹԱՑԻ ԹԵՄԱՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ..... 22
2.1. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ ..... 22
2.2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԸ ..... 23
2.3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ..... 25

ԲԱԺԻՆ 3.
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ .. 70
3.1. ԳԻՏԵԼԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ..... 70
3.2. ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱՐ ..... 71
3.3. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ..... 72

3.4. ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ ԴԱՍԱԽՈՍԻՆ ........ 73
3.5. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՆԵՐ ........ 74
3.6.ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ........ 76
*3.6.1.Կուրսային աշխատանքների կատարման և պաշտպանության հիմնական խնդիրները* ........ 76
*3.6.2.Կուրսային աշխատանքների թեմաներ* ........ 77
3.7. ԹԵՍՏԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ ........ 78
3.8. ԸՆԹԱՑԻԿ (ՄԻՋԱՆԿՅԱԼ) ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐ........ 82
*3.8.1. Առաջին միջանկյալ քննության հարցեր* ........ 82
*3.8.2. Երկրորդ միջանկյալ քննության հարցեր* ........ 83
3.9. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ........ 84

# ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Քաղաքական մշակույթ» դասընթացի ծրագիրը մշակվել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ուսումնամեթոդական խորհրդի և քաղաքական գիտության պատմության ու տեսության ամբիոնի կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան:

«Քաղաքական մշակույթ» դասընթացի ընդգրկումը միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսումնական առարկաների շարքում չափազանց կարևոր է: Այն քաղաքագիտության, միջազգային հարաբերությունների, հանրային կառավարման մասնագիտությունների առանցքային դասընթացներից է, որն իր քննարկման հարցերով, քաղաքական և հանրային ինստիտուտների կազմակերպման և զարգացման, հասարակական-քաղաքական կյանքի ընկալման ու բացատրման առումով դառնում է խիստ պահանջարկված: Դասընթացը նպաստում է ուսանողների ընդհանուր զարգացմանը, լայնախոհ մտածողության ձևավորմանը, ծանոթացնում մշակույթի, մասնավորապես՝ քաղաքական մշակույթի կայացման առանձնահատկություններին, արդի իրավիճակին ու խնդիրներին: Հասարակական կեցության և մտածողության փոփոխությունների, հասարակական գիտությունների բովանդակության լրջագույն վերանայումների այս փուլում, այն իր վրա կարող է վերցնել մեր երկրի քաղաքականության, հանրային կառավարման, քաղաքական ինստիտուտների զարգացման, գլոբալ քաղաքականության, ինչպես նաև ազգային *մենթալիտետի* վերաբերյալ ամբողջական աշխարհայացքի և համակարգված գիտելիքի ձևավորման կարևորագույն գործի իրականացման պատասխանատվությունը:

Հայաստանի Հանրապետության հասարակական զարգացման ժամանակակից փուլը բնութագրվում է քաղաքական գործընթացների նշանակալի փոփոխություններով, որի գծերից մեկն այդ գործընթացի մեջ բնակչության լայն խավերի ընդգրկումն է: Այդ պայմաններում կարևորվում է տարբեր հանրույթների և

առանձին անհատների *քաղաքական վարքագծի* առանձնահատկությունների պարզաբանումները, *մոտիվացիաների* ու գործողությունների դրսևորումները, քաղաքական հայացքների ձևավորումը և դրանց կապը տվյալ հասարակության *քաղաքական համակարգի* և *քաղաքական մշակույթի* հետ: Առանց քաղաքական գործընթացների, քաղաքական համակարգի և քաղաքական մշակույթի յուրահատկությունների ուսումնասիրման անհնար է համապատասխան պատկերացում կազմել Հայաստանի ներկայիս քաղաքական կյանքի էության և բնույթի վերաբերյալ:

*Մշակույթը* մարդկային փոխազդեցությունների զարգացման չափանիշ և միջոց է: Այն, կարծես թե, ինչ-որ անտեսանելի թելերով կապում է ամբողջ մարդկային համակեցությունը, հարստացնելով և զարգացնելով հասարակության մեջ առկա փոխհարաբերությունները: Մարդկանց ընդհանուր մշակույթի բաղկացուցիչ մաս է կազմում քաղաքական մշակույթը, որը հանդես է գալիս որպես ցանկացած հասարակության քաղաքական զարգացման կարևոր պայման: Նրա վիճակից և զարգացվածությունից, քաղաքական արժեքների որակից է կախված հասարակության քաղաքական ներունակությունը, նրա քաղաքական և պատմական ծագումնաբանության հեռանկարները: Քաղաքական մշակույթի ուսումնասիրությունը բացահայտում է մարդու դերը՝ որպես քաղաքականության ստեղծողի: Կարելի է ասել, որ քաղաքականության հիմքում ընկած է և դրսևորվում է տվյալ հասարակության քաղաքական մշակույթը: Քաղաքական մշակույթի իմացությունը հնարավորություն է տալիս թափանցել քաղաքականության էության մեջ, ներթափանցում է քաղաքական երևույթների և գործընթացների վրա մշակույթի բազմակողմ ազդեցության ըմբռնումը: Ռուս հատնի հետազոտող Օ. Ն. Շաբրովը նշում է, որ եթե մարդու էությունը մշակույթն է, ապա մարդու էությունը այն մասով, որով նա ընդգրկված է քաղաքական գործընթացի մեջ՝ որպես քաղաքական մարդ, կամ «homo politicus», հանդիսանում է քաղաքական մշակույթը:

Ներկայումս առկա են տարբեր հետազոտական, վերլուծական կենտրոններ, փորձագիտական խմբեր, որոնք մասնագիտանում են քաղաքական կուսակցությունների, հասարակական շարժումների, իշխանության տարբեր օղակների, բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են Հայաստանի քաղաքական կյանքով, որոշակի ծրագրերի, կանխատեսումների, երաշխավորությունների և այլ խնդիրների մշակմամբ: Այսպես կամ այնպես, բոլոր այդ մշակումներն ուղղակի կամ թաքնված կերպով արտահայտում են առանձին քաղաքական գործիչների, քաղաքական կառույցների, սոցիալական խմբերի, հասարակական կարծիքի ներկայացուցիչների և այլոց կարծիքները, միաժամանակ ձևավորելով, ներկայացնելով տվյալ իրավիճակին և ժամանակաշրջանին համապատասխան քաղաքական մշակույթը:

Ներկայացված ծրագրով ուսանողներին առաջարկում ենք քաղաքական հայացքների, գնահատականների, դիրքորոշումների, և առհասարակ, տարբեր մոտեցումների ընդհանրացված պատկերը, որը թույլ կտա այս կամ այն կերպ գնահատել քաղաքական մշակույթի բովանդակությունն ու մակարդակը Հայաստանում: Ներկայացվող դասընթացում մենք ձգտում ենք նաև ցույց տալ, թե ինչպես է «արվում» մեծ քաղաքականությունը, ժամանակակից հասարակության մեջ քաղաքական հակադրությունների բնույթը, ազդեցիկ քաղաքական կազմավորումների տեխնոլոգիաներն ու արժեքային դրվածքները, տարբեր քաղաքական շարժումների, կուսակցությունների, առաջնորդների և նմանատիպ երևույթների ծագման մշակութային-պատմական արմատները: Նկատի ունենալով այս և այլ մոտեցումները, *քաղաքականությունը կարելի է սահմանել որպես մարդկանց համակեցության քաղաքակիրթ ձև, որը կոչված է ապահովելու «ընդհանուր բարօրություն» և անհատական շահերի հավասարակշռություն՝ հանդես գալով որպես մարդկային կյանքի համապարփակ չափում:* Մեր կարծիքով, բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են ուսումնասիրել մեր հասարակության քաղաքական մշակույթը, հատուկ հետաքրքրություն կարող է ներկայացնել տեղեկույթն

այն մասին, թե ինչպիսի հասարակական կարծիք է ձևավորվում այս կամ այն քաղաքական կուսակցությունների, առաջնորդների, շարժումների և այլ քաղաքական երևույթների նկատմամբ: Հայաստանում ընթացող քաղաքական պայքարի և բարեփոխումների խնդիրների հետ կապված կարևորվում է նաև, թե ինչպիսի արժեքների, գաղափարների, մշակութային կարծրատիպերի հիման վրա է հնարավոր իրականացնել հասարակության մեջ սոցիալ-քաղաքական համախմբումը (կոնսոլիդացիան):

Գլոբալացվող աշխարհի պայմաններում կարևորություն է ձեռք բերում տարբեր *քաղաքակրթությունների* քաղաքական մշակույթների համեմատական վերլուծությունը: Նմանատիպ վերլուծությունները և տարբեր սոցիոմշակութային միջավայրերի մեջ մարդկանց քաղաքական վարքի վրա դրանց ազդեցության բնույթն օգնում է լավագույնս հասկանալու ինչպես սեփական քաղաքական մշակույթը, այնպես էլ այլ երկրների մշակույթը, բացահայտել դրանց ծագման հեռանկարները, փոխազդեցության, փոխհարստացման գործընթացները: Սա հատկապես կարևոր է այն առումով, որ Հայաստանն այսպես կամ այնպես դառնում է գլոբալ աշխարհի անքակտելի մասը, ձգտելով պահպանել իր օրինական ազգային շահերը: Ժամանակակից հետազոտողները հաստատում են, որ յուրաքանչյուր քաղաքակրթության մշակութային արժեքները չեն կարող հավակնել համընդհանուր համապարփակության կամ հանդես գալ որպես ինչ-որ պարտադիր չափանիշ: Նույնիսկ առավել տարածված բարոյական նորմերը, առավել ակնհայտ քաղաքական և սոցիալական կառույցները բոլոր դեպքերում չեն հանդիսանում համընդհանուր: Շատ հիմնախնդիրներ, որոնք արդիական են Արևմուտքի երկրներում, կարող են չկարևորվել արևելյան հասարակություններում: Եվ առհասարակ, մշակութային արգելքներն առիթ են դառնում հասարակության տարբեր կողմերի վերաբերյալ հետազոտողների լուրջ դատողությունների համար և օժանդակում են սոցիալական գիտությունների մեջ *հարացույցների* (*պարադիգմաների*) փոփոխմանը:

# ԲԱԺԻՆ 1.
# ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

## 1.1. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ

Դասընթացի հիմնական նպատակն է՝ առաջին՝ ձևավորել զարգացած քաղաքական մտածողությամբ քաղաքացի և պրոֆեսիոնալ քաղաքագետ, և երկրորդ՝ բացահայտել հայաստանյան հասարակության ժամանակակից քաղաքական գործընթացների բնույթը՝ հաշվի առնելով ինչպես պատմական փորձը, ձևավորված ավանդույթները, այնպես էլ ազգային և քաղաքակրթական առանձնահատկությունները:

Այս նպատակային դրույթներից են քաղաքական մշակույթի՝ որպես քաղաքագիտական գիտակարգի էության և բովանդակության պարզաբանումներ մասին, որը կարելի է սահմանել որպես *սոցիալ-քաղաքական բնագավառում իրացվող որոշակի գործունեություն և եղանակ, որը պայմանավորված է փվյալ հասարակական կարգի բնույթով և քաղաքականության սուբյեկտների կողմից քաղաքական փորձի, ավանդույթների, նորմերի, կողմնորոշումների ու գիտելիքների յուրացման աստիճանով, կոնկրետ իրավիճակում դրանք կիրառելու ընդունակությամբ:*

Դասընթացի նպատակը քաղաքականության և մշակույթի հարաբերակցության, քաղաքական մշակույթը՝ որպես քաղաքագիտության և մշակութաբանության անհրաժեշտ եզրույթի լուսաբանումն է, ուսանողներին դրա վերլուծական միջոցներին, ինչպես նաև համաշխարհային մտավոր դաշտում այդ գիտակարգի զարգացման հիմնական ուղղություններին ծանոթացնելը: *Մշակութաբանության ներկայացումը՝ որպես գիտություն մշակույթների բազմազանության, նրանց ինքնությության և փարբերության մասին, որը փորձում է իմաստավորել մշակութային զարգացման գործընթացը:* Ընդհանուր քննարկմամբ՝ մշակույթի գործառույթների, մշակույթը՝ որպես հասարակության ենթահամակարգի ներկայացումն է: Դասընթացում պարզաբանվում են քա-

ղաքականության և մշակույթի հիմնական ասպեկտները, քաղաքական մշակույթի հայեցակարգային վերլուծությունները ու առանցքային եզրույթները, պատմականությունը և արդիականությունը: Դասընթացում քաղաքական մշակույթը քննարկվում է նաև որպես հասարակության քաղաքական համակարգի բաղկացուցիչ մաս, նրա ակտիվ ազդեցությունը քաղաքական համակարգի գործառնության և կայունության, քաղաքական գործընթացների վրա: Վերլուծվում է քաղաքական կառավարման խնդիրների հետ կապված հարցադրումներ՝ քաղաքական կառավարման մշակույթը, քաղաքական ռիսկը և այլն:

Կարևորվում է նաև քաղաքական մշակույթի հիմնական գործառույթները և ընդհանուր կառուցվածքային քննարկումները: Նախ, քաղաքական մշակույթը՝ որպես քաղաքական կյանքի տարբեր հայեցակետերի վերաբերյալ ձևավորված պատկերացումների ամբողջություն, որի մեջ մտնում են սոցիալական սուբյեկտի քաղաքական փորձը, քաղաքական գործունեության ավանդույթները, եղանակները, քաղաքական գիտելիքները, համոզմունքները, ինչպես նաև արժեքները, նորմերը և ձևավորված քաղաքական ինստիտուտները: Երկրորդ, քաղաքական մշակույթի ձևավորման մակարդակները: Եվ երրորդ, կառուցվածքային տարրերը՝ կոգնիտիվ, ինստիտուցիոնալ, հուզական-հոգեբանական, բարոյական-արժեքային բաղադրիչները և քաղաքական խորհրդանիշները: Ներկայացվում են քաղաքական մշակույթի դասական և ոչ դասական տիպաբանության քննարկումները և ազգային մոդելների (տարբեր երկրների քաղաքական մշակույթների), դրանց առանձնահատկությունների պարզաբանումներն ու համեմատական վերլուծությունները:

Դասընթացի կարևոր նպատակներից մեկն էլ, ինչպես արդեն նշել ենք, հայաստանյան քաղաքական մշակույթի սկզբնավորման և կայացման հարցերի, Հայաստանի արդի քաղաքական մշակույթի առանձնահատկությունների ու զարգացման քննարկումներն են: Հայաստանի քաղաքական մշակույթի համալիր վերլուծությունը ենթադրում է նրա գլխավոր բաղադրիչների վե-

րակառուցում՝ ընդգրկելով ոչ միայն *քաղաքական գիտակցությունը*, այլև հայաստանյան բնակչության քաղաքական վարքագիծը: Ընդ որում, հայաստանյան քաղաքական մշակույթի պատմաքաղաքագիտական քննարկումներից առաջ ներկայացվում են համապատասխան թեմաներ, որոնցում համակարգվում է քաղաքական մշակույթի հիմնական եզրույթները, քննարկվում են տարբեր հայեցակարգեր և որոնց հիման վրա փորձ է արվում ներկայացնել Հայաստանի արդի քաղաքական մշակույթի զարգացման և կատարելագործման հիմնախնդիրները:

Այս ամենին համապատասխան նպատակային դիրքորոշումները հետևյալն են:

1. Ուսանողին ծանոթացնել քաղաքական գիտության, քաղաքական կառավարման, մշակութաբանության և քաղաքական մշակույթի հիմնական եզրույթների, տեսական մոտեցումների ու հիմնախնդիրների, քաղաքական գործընթացների իմաստավորման և բնութագրման հետ:

2. Ուսանողին բացատրել, ներկայացնել «քաղաքական մշակույթ» եզրույթի առաջացման աղբյուրները, մեկնաբանման հիմնական հայեցակարգային մոտեցումները:

3. Ներկայացնել ամերիկյան քաղաքագետներ Գաբրիել Օլմոնդի և Սիդնեյ Վերբայի քաղաքական մշակույթի տեսության հիմնական առանձնահատկությունները: Ինչի՞ վրա է հիմնված նրանց քաղաքացիական մշակույթի հայեցակարգը:

4. Պարզաբանել քաղաքական մշակույթի գործառույթները, կառուցվածքային տարրերը, տիպաբանությունը և ազգային մոդելների վերլուծությունները;

5. Ուսանողների մեջ ձևավորել ստեղծագործական մտածողություն և քաղաքական իրականությունը վերլուծելու հմտություններ, սոցիալ-քաղաքական գործունեության հիմքերի կառուցողական ըմբռնում:

6. Ապագա մասնագետին տալ քաղաքական առաջնային գիտելիքներ, որոնք տեսական հիմք կծառայեն սոցիալ-քաղաքական գործընթացների իմաստավորման, քաղաքական մշակույթի

ձևավորման, սեփական դիրքորոշումների մշակման և պատասխանատվության սահմաններն առավել պարզ ըմբռնելու համար:

7. Պարզաբանել, թե ո՞րն է ժամանակակից Հայաստանում քաղաքական մշակույթի ձևավորման առանձնահատկությունը: Արդյո՞ք ժողովրդավարական վարչակարգերի համար պահանջվում է հատուկ «քաղաքացիական մշակույթ»:

8. Փորձ է արվում բացահայտել այն հիմնախնդիրները, որոնք ծառացել են Հայաստանի առաջ գլոբալացման պայմաններում: Քաղաքակրթությունների բախման վերաբերյալ տարբեր հայեցակարգերի քննարկումներ: Հայաստանի և արևմտյան մշակույթի բախման խնդիրը գլոբալացման դիրքերից: Գլոբալացման մարտահրավերները և տարբերակված մշակութային քաղաքականության մշակումը (տարբեր քաղաքական մշակույթների բաղադրիչների փոխհարաբերության խնդիրները և այլն):

9. Դիտարկվում է Հայաստանի կողմից այլ երկրների քաղաքական մշակույթի պատճենահանման անընդունելիությունը, ստեղծագործական մոտեցման ցուցաբերում և այնպիսի փոխառումներ և ընդօրինակություններ, որոնք չեն հակասում մեր ազգային մենթալիտետի առանձնահատկություններին:

10. Փորձ է արվում կատարել Հայաստանի արդի քաղաքական մշակույթի ինստիտուցիոնալ, արժենորմատիվ, հումանիտար և *կոգնիտիվ* բաղադրիչների կատարելագործման ուղիների քննարկումներ:

## 1.2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ներկայացնել «մշակույթ» և «քաղաքականություն» եզրույթների բովանդակային, համեմատական և արժեքային վերլուծությունները: Որոշ նկատառումներ մշակույթի և քաղաքականության, նրանց փոխհարաբերակցության վերաբերյալ:

Քաղաքական մշակույթը բացատրել և քննարկել որպես հասարակական կյանքի առանձնահատուկ ոլորտ, ներկայացնել

նրա տարբեր մեկնաբանություններն ու ժամանակակից տեսությունները:

Քննարկել քաղաքական մշակույթը՝ շեշտը դնելով, մի դեպքում սուբյեկտիվ կողմի վրա, մեկ այլ դեպքում ընդգծել արժեհամակարգային համակարգի դերը, երրորդ դեպքում նշել կապը պրակտիկ գործունեության հետ:

Ներկայացնել քաղաքական մշակույթի ոլորտի հատկանշային, կառուցվածքային, ընթացակարգային և գործառութային *պարամետրերի* սահմանումներն ու քննարկումները, դրանց արդի վիճակի և միտումների զարգացման, հասարակական կյանքի այլ բնագավառների հետ փոխհարաբերությունների պարզաբանումներ:

Լուսաբանել քաղաքական մշակույթի հիմնային արժեքներն ու այդ արժեքների համակարգը, որոնք սահմանում են մարդու աշխարհայացքը, համոզմունքները և, իհարկե, մարդու գործողությունները, որոնք ուղղված են սոցիալական իրականության վերափոխմանը:

Պարզաբանել քաղաքական մշակույթի տիպաբանությունը, տարբեր մոդելներն ու տեսությունները հասարակության արդի զարգացման տեսանկյունից, Ռոնալդ Ինգլհարտի պոստմատերիալիստական քաղաքական մշակույթի տեսությունը:

Բացահայտել ազգային հոգեկերտվածքի և քաղաքական մշակույթի փոխհարաբերության խնդիրները:

Ներկայացնել Հայաստանի քաղաքական մշակույթի ակունքները, նրա ձևավորման, դրսևորման խնդիրները:

Ներկայացնել և քննարկել Հայաստանի արդի քաղաքական մշակույթի առանձնահատկությունները, զարգացման և կատարելագործման հիմնախնդիրները:

Ուսանողների մոտ ձևավորել քաղաքական օբյեկտների տեսական մոդելավորման սկզբնական հմտություններ, որոշակի իրավասության (բանիմացության) կազմավորում, որը կարող է բավարարել քաղաքականության ժամանակակից բարդ տարածությունում սովորողների ինքնուրույն կողմնորոշմանը:

Հետաքրքրություն առաջացնել հասարակական-քաղաքական երևույթների և գործընթացների, քաղաքական ինքնակրթության զարգացման ձգտման նկատմամբ:

Ձևավորել քաղաքացիականության, ապագա մասնագետի անձնական դիրքորոշման ուղղվածության, ընկալումների տեսական և գործնական շրջանակները: Կոնկրետ բնագավառներում իրացվող կառավարչական որոշումների ընդունման, հասարակության զարգացման միտումների ըմբռնման, պետության քաղաքականության վերաբերյալ համապատասխան հմտությունները:

## 1.3.ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՂԸ ՍՈՑԻՈՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

«Քաղաքական մշակույթ» դասընթացը հանդիսանում է քաղաքագիտական ուսումնասիրությունների հիմնային կուրս ապագա քաղաքագետների, միջազգայնագետների, հանրային կառավարման մասնագետների համար: Դասընթացի ուսումնասիրությունը կապված է սոցիալ-քաղաքական և հասարակական տարբեր գիտությունների հետ, լրացնում, զարգացնում և որոշիականացնում է այդ գիտությունների գծով կազմակերպվող դասընթացներից ստացած գիտելիքները: «Քաղաքական մշակույթ» դասընթացը միջգիտակարգային կարգավիճակ ունի, հենվում է տարբեր գիտակարգերի ուսումնասիրությունների վրա, որոնց մեջ առավել հենակետային են հանդիսանում քաղաքականության տեսությունը, քաղաքական գիտության մեթոդաբանությունը, քաղաքական գաղափարախոսությունը:

Քաղաքական մշակույթի և նրա հետ կապված երևույթների վերլուծությունը թույլ է տալիս ոչ միայն քաղաքականապես գրագետ մեկնաբանել գործընթացները, որոնք տեղի են ունենում գաղափարախոսական բնագավառում, այլև բացահայտել սոցիումի քաղաքական ոլորտում ոչ միանշանակ շատ երևույթների պատճառներն ու հետևանքները: Հասարակության քաղաքական մշակույթի ուսումնասիրությունը թույլատրում է խորը կերպով հասկա-

նալ քաղաքացիների վարքագծի և պետական ղեկավարների կողմից այս կամ այն որոշումների ընդունման մոտիվացիան:

## 1.4. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

### Ա. Ըստ վերլուծական իրազեկության՝ կապված տեղեկատվության և գիտելիքի կառավարման հետ

1) Համացանցում համապատասխան տեղեկատվության արդյունավետ որոնումների ընդունակության ձևավորում:
2) Տեղեկատվական գիտելիքը վերափոխելու կարողություն, այսինքն, տեղեկատվության հետ աշխատելու և այն վերլուծելու ունակությունների զարգացում:
3) Ներկայացվող գիտակարգի առարկայական բովանդակությամբ պայմանավորված աշխարհաքաղաքական և ազգային համատեքստում հոգևոր, սոցիոմշակութային և քաղաքական գործընթացների համալիր և իրավիճակային վերլուծության ընդունակության զարգացում:
4) Քաղաքական-մշակութային երևույթների համեմատական վերլուծության հմտությունների ձևավորում և դրանց ազդեցությունը որոշումների ընդունման գործընթացների վրա:
5) Փորձագիտական գնահատման և կանխատեսման հըմտությունների տիրապետում:
6) Վերլուծական խնդիրների, հետազոտական հարցադրումների և հիմնական վարկածների ձևավորման կարողության զարգացում:
7) Հասկացությունների վերլուծման հմտություն:
8) Էմպիրիկ տվյալների հավաքում (ինքնուրույն աշխատանքի կատարում):

### Բ. Ըստ հաղորդակցային իրազեկության

1) Միասնական խնդիրների և հարցադրումների պատրաստման միջոցով համատեղ՝ թիմով աշխատելու ընդունակության զարգացում:
2) Բանավեճի համատեքստում պրոֆեսիոնալ հաղորդակցության հմտությունների զարգացում:
3) Վերլուծության արդյունքները բանավոր և գրավոր ներկայացնելու ընդունակություն:

## 1.5. ԿՐԹԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ (ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ)

1) Դասախոսություններ, այդ թվում՝ երկխոսության բաղադրամասերի ընդգրկմամբ:
2) Տեսական քննարկումներ՝ փոխներգործող (ինտերակտիվ) բանավեճերի առաջադրմամբ: Դասընթացի շրջանակներում անցկացվող դասախոսությունների և քննարկվող թեմաների ընթացքում օգտագործվում են ակտիվ և ինտերակտիվ ուսուցման մոդելները: Ակտիվ մոդելի օգտագործման շնորհիվ ուսանողն իրականացնում է ինքնուրույն աշխատանքներ, ստեղծագործական առաջադրանքներ: Ինտերակտիվ մոդելի ուսուցման շրջանակներում օգտագործվում է դերային խաղեր, գործնական հարաբերությունների տարբեր իրավիճակների համեմատումներ և քննարկումներ, ինչպես նաև փորձ է արվում առաջադրված խնդիրների լուծումներ գտնել:
3) Ինքնուրույն աշխատանք՝ ընդգրկելով վերլուծական նյութերը:
4) Արտալսարանային հաղորդակցություն դասախոսի հետ՝ քննարկումների համատեղ պատրաստում: Դասախոսությունների և թեմաների քննարկումների արդյունավետու-

թյունը բարձրացնելու նպատակով օգտագործվում են ին-տերակտիվ կրթական տեխնոլոգիաներ.

- աշխատանքների իրականացում փոքր խմբերով,
- կոնկրետ իրավիճակների վերլուծություն (case study),
- դերային և գործնական խաղեր,
- մոդուլային ուսուցում,
- համատեքստային ուսուցում,
- քննադատական մտածողության զարգացում:

5) Համացանցում համապատասխան տեղեկատվության արդյունավետ որոնումների ընդունակության ձևավորում:
6) Տեղեկատվական գիտելիքը վերափոխելու կարողություն, այսինքն՝ տեղեկատվության հետ աշխատելու և վերլուծե-լու ունակությունների զարգացում:
7) Վերլուծական խնդիրների, հետազոտական հարցադ-րումների և հիմնական վարկածների ձևավորման կարո-ղության զարգացում:
8) Հասկացությունների վերլուծման հմտություն:
9) Էմպիրիկ տվյալների հավաքում (ինքնուրույն աշխա-տանք կատարելու համար):

## 1.6. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՅՈՒՐԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

*Դասընթացի ավարտին ուսանողը կունենա՝*

**Գիտելիք և իմացություն**

- Կծանոթանա քաղաքական մշակույթի հիմնական եզ-րույթների, տեսական մոտեցումների և հիմնախնդիրների հետ:
- Կստանա համապատասխան գիտելիքներ քաղաքական մշակույթի հայեցակարգային վերլուծությունների մասին:
- Պատկերացում կկազմի քաղաքական մշակույթի՝ որպես սոցիալական երևույթի՝ առանձնահատկության վերաբերյալ:

- Կպարզաբանի քաղաքական մշակույթի տեղն ու դերը հասարակության և պետության զարգացման գործում:
- Գիտելիք կունենա Հայաստանի քաղաքական մշակույթի ձևավորման և կայացման, արդի հայաստանյան քաղաքական մշակույթի առանձնահատկությունների և զարգացման ուղիների վերաբերյալ:

**Ունակ կլինի**

❖ *(Բուն մասնագիտական կարողություններ)*

- Յուրացնել «քաղաքակրթություն», «մշակույթ» և «քաղաքականություն» հասկացությունների բովանդակության վերաբերյալ գիտելիքների անհրաժեշտ համալիրը, բացահայտել դրանց փոխադարձ կապերի զարգացման դինամիկան գլոբալացման պայմաններում՝ հաշվի առնելով յուրաքանչյուր մշակույթի կարևորությունն ու ինքնաարժեքը:
- Բացատրել Հայաստանի քաղաքական մշակույթի զարգացման առանձնահատկություններն ու արժեքային մոտեցումները, տարբեր քաղաքակրթությունների քաղաքական-մշակութային ծագման վերլուծության մեթոդաբանությունը՝ հաշվի առնելով դրանց մշակութային *մատրիցան*:
- Անցկացնել ինքնուրույն էմպիրիկ հետազոտություն՝ հայաստանյան քաղաքական գործընթացները գնահատելու համար:

❖ *(Ընդհանրական կարողություններ)*

- Կտիրապետի ժամանակակից քաղաքակրթությունների քաղաքական մշակույթների և հաղորդակցությունների վերլուծություններին ու դրանց կիրառման հմտություններին, կրոնի քաղաքական ինստիտուտների ձևավորման և զարգացման վրա քաղաքական մշակույթի ազդեցության առանձնահատկությունները:
- Ստացած գիտելիքները տեսական հիմք կծառայեն քաղաքական մշակույթի ձևավորման, սեփական դիրքորոշումների մշակման համար:

▪ Կստանա հիմնային գիտելիքներ և կյուրացնի հասարակության քաղաքական մշակույթի վերլուծության մեթոդաբանությունը, նրա բնորոշ գծերն ու առանձնահատկությունները և դրանց ազդեցությունը մարդկանց կյանքի այս կամ այն կողմի և ոլորտների վրա:

▪ Քաղաքական կյանքին և գործընթացներին մասնակցության գիտակցումը՝ որպես ընտրող, քաղաքացի կամ պրոֆեսիոնալ գործիչ:

## 1.6. ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԸՆԹԱՑԻԿ ՁԵՎԵՐԸ

1. Ինքնուրույն աշխատանքի արդյունքները վերլուծական աշխատանքների տեսքով (միջանկյալ վերահսկում), լրացուցիչ աղբյուրների և գրականության օգտագործում (վերլուծական աշխատանքներ, զեկուցումների, ռեֆերատների նախապատրաստում):
2. Հայեցակարգերի, փաստարկումների քննարկումներ (սեմինարներ-բանավեճերի տեսքով):
3. Պրակտիկ պարապմունքներ շնորհանդեսի (պրեզենտացիայի) ձևով, որոնք ուսանողների կողմից մշակվել են որպես հետազոտական նախագծեր:
4. Դասընթացի թեմաների թեստավորում. սահմանային կամ ընդհանուր արդյունքային թեստավորումներ:
5. Ընթացիկ (միջանկյալ) գրավոր քննություններ:
6. Եզրափակիչ քննություն (վերջնական արդյունքի վերահսկում):

# ԲԱԺԻՆ 2.
# ԴԱՍԸՆԹԱՑԻ ԹԵՄԱՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

## 2.1. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

| **Աշխատանքի տեսակը** | **ժամաքանակը** |
|---|---|
| Ընդհանուր ժամաքանակը | - |
| Լսարանային աշխատանք | 64 |
| Դասախոսություններ | 48 |
| Սեմինարներ | 16 |
| Ինքնուրույն աշխատանք (դասախոսության նյութերի, դասագրքերի, մենագրությունների, հոդվածների և նմանատիպ այլ աշխատանքների ինքնուրույն ուսումնասիրում: Գործնական պարապմունքների, ընթացիկ քննարկումների և ստուգումների նախապատրաստում) | 52 |
| Գիտելիքի ընթացիկ վերահսկման տեսակները (ստուգողական աշխատանքներ, միջանկյալ գրավոր քննություններ) | 1 ժամ մեկ ուսանողի համար - 72 |
| Եզրափակիչ քննություն | 65 |

## 2.2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԸ

| **Թեմաների անվանումները** | **Ցերեկային ուսուցում** | | | |
|---|---|---|---|---|
| | **ժամաքանակը** | | | |
| | **դասախոսություններ** | **սեմինար պարապմունքներ** | **ինք. աշխատանք** | **ժամերն ըստ թեմաների** |
| Ներածական մաս: Դասընթացի նպատակներն ու խնդիրները: | 2 | - | - | 2 |
| Մոդուլ 1. «Մշակույթ» հասկացությունը և էությունը: | 6 | - | 6 | 10 |
| Մոդուլ 2. Քաղաքական մշակույթը՝ որպես քաղաքականության և մշակույթի համադրություն: | 4 | 4 | 6 | 16 |
| Մոդուլ 3. Քաղաքական մշակույթը՝ որպես հասարակության քաղաքական համակարգի բաղադրամաս: | 4 | 2 | 8 | 16 |
| Մոդուլ 4. Քաղաքական մշակույթի հիմնական գործառույթները | 6 | 2 | 8 | 18 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| և ընդհանուր կառուցվածքը: | | | | |
| Մոդուլ 5. Քաղաքական մշակույթի տիպաբանությունը: | 6 | 2 | 8 | 18 |
| Մոդուլ 6. Քաղաքական մշակույթի ազգային մոդելները: | 8 | 2 | 8 | 16 |
| Մոդուլ 7. Ազգային հոգեկերտվածքը և քաղաքական մշակույթը: Հայաստանի քաղաքական մշակույթի ակունքները: | 4 | 2 | 6 | 12 |
| Մոդուլ 8. Հայաստանի արդի քաղաքական մշակույթի առանձնահատկությունները | 4 | 2 | 6 | 12 |
| Մոդուլ 9. Հայաստանի արդի քաղաքական մշակույթի զարգացման և կատարելագործման հիմնախնդիրները | 4 | 2 | 2 | 8 |
| | 48 | 16 | 56 | 120 |

## 2.3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

### ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ: ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Դասընթացի նպատակը և խնդիրները: Դասընթացի վերաբերյալ գրականության և տեղեկատվության այլ աղբյուրների տեսություն**:**

Դասընթացի տեղը քաղաքագիտական կրթական համակարգում, նրա կապն այլ գիտակարգերի հետ, որոնք ուսումնասիրվում են ուսումնառության ընթացքում: Մշակույթը՝ որպես հումանիտար և հասարակական գիտությունների՝ փիլիսոփայության, մշակութաբանության, քաղաքագիտության, սոցիոլոգիայի, պատմության և այլ գիտակարգերի ուսումնասիրման օբյեկտ:

«Քաղաքական մշակույթ» դասընթացի արդիականությունը: Քաղաքական մշակույթի դերի բարձրացումը ժամանակակից պայմաններում: Գործոններ, որոնք պատճառաբանում են հասարակության քաղաքական կյանքում քաղաքական մշակույթի երևույթի նշանակության բարձրացումը:

### ՄՈԴՈՒԼ 1.
### «ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Մշակույթը՝ որպես մարդու և հասարակության զարգացման չափանիշ: «Մշակույթ» հասկացությունը և նրա բովանդակությունը: Հոգևոր և նյութական, սոցիալական և քաղաքական մշակույթ: Մշակույթը՝ որպես բազմակերպ որպես բազմակերպ և բազմաչափ հասարակական կազմավորում՝ արտադրության մշակույթ, հողագործության մշակույթ, կառավարման մշակույթ, տեխնոլոգիական մշակույթ, տնտեսության մշակույթ, քաղաքական մշակույթ, հոգևոր և կրթական մշակույթ, կրոնի մշակույթ, գեղարվեստական մշակույթ, կենցաղի մշակույթ և այլն:

*Մշակութաբանությունը՝ որպես գիտություն մշակույթների բազմազանության, նրանց ինքնուրույնության և տարբերության մասին, որը փորձում է իմաստավորել մշակութային զարգացման գործընթացը:* Մշակութաբանության պայմանավորվածությունը հումանիտար գիտելիքների դերի աճով: «Մշակույթ» հասկացության և նրա էության քննարկումը՝ սոցիոլոգիական, իմացաբանական, նորմատիվ-արժեքային, սեմիոտիկական, էվրիստիկական մոտեցումները: Մշակույթի մեկնաբանությունը՝ որպես հասարակական պրակտիկայի գործընթացում մարդկանց կողմից ստեղծված արժեքների ամբողջություն: Մշակույթը՝ որպես մարդկանց նպատակային գործունեության և նրա արդյունքների եղանակների ամբողջություն, որպես վերկենսաբանական ծրագրավորում, որպես նշանային համակարգ: Մշակույթը՝ որպես հասարակության զարգացման որոշակի փուլի որակական վիճակ:

*Մշակույթի գործառույթները:* Մարդաստեղծագործական կամ հումանիտար գործառույթը: Մշակույթի արտադրական, արժեքների հավաքման և տարածման, սոցիալական փորձի հաղորդման, անհատի սոցիալականացման, ճանաչողական, վերակառուցողական, կարգավորման (նորմատիվային), արժեքային (աքսիոլոգիական), հաղորդակցային (կոմունիկացիոն) և այլ գործառույթները:

*Մշակույթը՝ որպես հասարակության ենթահամակարգ:* Հասարակության և քաղաքականության մեջ մշակույթի դերի ըմբռնման գործում համակարգային մոտեցման մեթոդաբանական նշանակությունը: Համակեցության հինգ հիմնական համակարգերը՝ կենսասոցիալական, էկոլոգիական, տնտեսական, մշակութային և քաղաքական: Գործողության ենթահամակարգերը և նրանց գործառույթներն ըստ ամերիկյան սոցիոլոգ Թալկոտ Պարսոնսի (1902-1979): Հասարակության (սոցիալական համակարգի) մեկնաբանությունը Թալկոտ Պարսոնսի կողմից:

Մշակույթի ուսումնասիրման տարբեր մոտեցումները՝ պատմական կամ պատմական-ժառանգական, մարդաբանական (անտրոպոլոգիական), սոցիոմշակութային, գործունեութենական-

վարքաբանական, արժեքային, քաղաքակրթական, համակարգային, առարկայական, ինստիտուցիոնալային, տեխնոլոգիական, խորհրդանշանային, տեքստային-հաղորդակցային, խաղային, հոգեբանական, երկխոսային: Մշակույթի դիտարկումը հետարդիականության տրամասույթի (դիսկուրսի) շրջանակներում: Մշակույթի ուսումնասիրումը գլոբալացվող գործընթացների համատեքստում:

## ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. ***Գաբրիելյան Մ., Դաքաղյան Ա., Թադևոսյան Ա., Մարգարյան Ն.,*** Հոգևոր անվտանգության ապահովման և բարոյական արժեքների պահպանման հիմնադրույթները ազգային անվտանգության համատեքստում, Երևան, 2003:
2. ***Գուրևիչ Պ. Ս.,*** Մշակութաբանություն. Դասագիրք, 3-րդ հրատարակչ., վերամշ. և լրաց., թարգմ. Աբրահամյան Վ. - Եր.: «Զանգակ-97», 2002:
3. ***Թադևոսյան Ա.,*** Մշակութային ինքնության պահպանման և վերարտադրության հիմնահարցը ազգային անվտանգության տեսանկյունից, Երևան, 2003:
4. ***Гусейнов А. И.,*** Соционормативная сфера культуры // Вопросы философии. – 2008. -[1] 8.
5. ***Ижиков Н. В.,*** Культура и политика. Методологические проблемы // Социологические исследования. – 2008. -[1] 9.
6. ***Ионин Л.Г.,*** Социология культуры. Четвертое изд., переработанное и дополненное. М., 2004, Издательский дом ГУ ВШЭ.
7. ***Ирхин Ю.В.,*** Социология культуры: учебник / Ю.В. Ирхин. – М.: Экзамен, 2006.
8. ***Кононенко Б. И.,*** Гуманизм и культура // Социология власти. – 2008. -[1] 6. С. 22-29.
9. ***Маркарян Э.С.***, Теория культуры и современная наука. М., 1983.
10. ***Нармин А.,*** Философия культуры в информационном обществе // Вопросы философии. – 2006. -[1] 2. С. 52-60.
11. ***Павлюк А. А.,*** Взгляды Ф Фукуямы на национальную культуру как средство идентификации // Вестник Московского посударственного университета. Серия «История и политические науки». – 2008. -[1] 2. С. 133-138.

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. ***Блюменкранц М.,*** Глобальные проблемы современного культурного процесса // Вопросы философии, 2006, № 5. – С. 160-164.
2. ***Веремеев А. А.,*** Введение в культурологию. Брянск. 2000.
3. ***Енгоян А. П.,*** Идеологические основы социально-политических трансформаций в постсоветской Армении / Отв. Ред.: К.А. Мирумян. – Ер.: Изд-во РАУ.
4. ***Карпухин О. И.,*** Национальная культура – основа национальной идентичности // Социльно-гуманитархые знания. – 2006. -[1] 2. С. 31-56.
5. ***Кудрин Т. А.,*** Политика и культура. М., 1993.
6. ***Левяш И. Я.,*** Культурология: Курс лекций. – Мн.: НТООО “Тетра-Системс”, 1998.
7. ***Мартыненко С. В.,*** Глобализация и культура // Социлльно-гуманитарные знания. – 2008. -[1] 5. С. 77-86.
8. *Политология. Учебник для вузов* / Под ред. М.А. Василика. – М.: -Юристь, 2001.
9. ***Сергеев В. О.,*** О формировании культурной политики в современных условиях // Власть. – 2008. -[1] 9. С. 13-15.
10. ***Тульчинский Г. Л.,*** Массовая культура как воплощение гуманизма просвещения // Филиософские науки – 2008. -[1] 10. С. 38-57.
11. ***Хейзинга Й.,*** Задача истории культуры. / В кн. “Об исторических жизненых идеалах и другие лекции”, Overseas Publications Interchage, 1992.
12. ***Шишкина Е. А.,*** Култура как источник цивилизационних и социо-природных трансформаций // Социлльно-гуманитархые знания. – 2008. -[1] 5. С. 58-67.


### *Հարցեր ինքնուրույն աշխատանքի համար*

1. Մշակույթի ըմբռնումը՝ որպես գիտական հասկացություն:
2. Ի՞նչ հիմքերով ու հատկանիշներով են դասակարգում (տիպաբանություն ենթարկում) մշակույթը:
3. Ինչպիսի՞ն են մշակույթի հետազոտության հիմնական մոտեցումները:
4. Զնակերպեք մշակույթի հիմնական տեսակների փոխազդեցությունները:

5. Ինչպիսի՞ ենթահամակարգեր է առանձնացնում ամերիկյան սոցիոլոգ Թալկոտ Պարսոնսը գործողության և սոցիալական համակարգերի ընդհանուր տեսության մեջ:
6. Բնութագրեք մշակույթի գործառույթները:
7. Ինչպիսի՞ արժեքներով կարող են տարբերվել մշակույթները:
8. Ինչպիսի՞ն են մշակույթի արժեքների չափանիշները:
9. Ինչպիսի՞ն է կրոնի դերը մշակույթի մեջ:
10. Ինչպիսի՞ն են տարբեր մշակույթների վերլուծության ժամանակ հաղորդակցաբանական մոտեցման խնդիրները:
11. Ինչո՞ւմն է մշակույթի, նրա հիմնախնդիրների ուսումնասիրման պոստմոդեռնիստական (հետարդիականության) մոտեցման էությունը:

# ՄՈԴՈՒԼ 2.
# ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ՝ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ

*Քաղաքականության մեկնաբանման ժամանակակից մոտեցումները*՝ սոցիոլոգիական, պահպանողական-ավանդական, լիբերալ (ազատական) և այլն: Քաղաքականության հիմնական հատկանիշները՝ միջխմբային հարաբերությունների տարատեսակությունը, սոցիալական պահանջմունքների գիտակցումը, կառավարողների և կառավարվողների փոխազդեցության և համատեղ մասնակցության ձևերը, իշխանության նվաճում ու օգտագործումը: Քաղաքականությունը՝ որպես մարդկանց համակեցության քաղաքակիրթ ձև, որը կոչված է ապահովելու «ընդհանուր բարօրություն» և անհատական շահերի հավասարակշռություն՝ հանդես գալով որպես մարդկային կյանքի համապարփակ չափում:

*Քաղաքականության և մշակույթի փոխազդեցության հիմնական ասպեկտները:* Մշակույթի ազդեցությունը քաղաքականության վրա: Մշակույթի ներթափանցումը քաղաքականության ոլորտ, նրա ազդեցությունը իշխանության իրացման եղանակների

վրա: Մշակույթի զարգացման կախվածությունը քաղաքական վերափոխումներից:

*«Քաղաքական մշակույթ» հասկացությունը. ծագումը և արդիականությունը:* Անցյալի տարբեր մտածողների՝ Արիստոտելի, Ն. Մաքիավելու, Շ. Մոնտեսքիոյի, Ա. Թոքվիլի, Մ. Վեբերի, Ն. Բերդյաևի և այլոց դիտարկումները քաղաքական երևույթի, որպես քաղաքական մշակույթի դրսևորման վերաբերյալ: «Քաղաքական մշակույթ» հասկացության մուտքը քաղաքական և սոցիալական գիտակարգերի համակարգ (Գաբրիել Օլմոնդ, Սիդնեյ Վերբա, Լուսիան Պայ): Քաղաքական մշակույթի կոնցեպտի ձևավորման հասարակական-քաղաքական պայմանները: Քաղաքական մշակույթը՝ որպես սուբյեկտիվ ոլորտ, որն, ըստ Գ. Օլմոնդի և Ս. Վերբայի ըմբռնմամբ, ընկած է քաղաքական գործունեությունների հիմքում: Քաղաքական մշակույթի քաղաքական կողմնորոշումները:

*Քաղաքական մշակույթի մեկնաբանությունները:* Քաղաքական մշակույթը՝ որպես սոցիալ-քաղաքական բնագավառում իրացվող որոշակի գործունեություն և եղանակ, որը պայմանավորված է տվյալ հասարակական կարգի բնույթով և քաղաքականության սուբյեկտների կողմից քաղաքական փորձի, ավանդույթների, նորմերի, կողմնորոշումների ու գիտելիքների յուրացման աստիճանով, կոնկրետ իրավիճակում դրանք կիրառելու ընդունակությամբ: Քաղաքագիտության շրջանակներում քաղաքական մշակույթի տեսության մշակման ամերիկյան գիտնականներ Ու. Ռոզենբաումի, Դ. Կավանախի, գերմանացի տեսաբան Կ. ֆոն Բոյմեյի, ֆրանսիացիներ Մ. Դյուվերժեյի և Ռ. Ժ. Շվացենբերգի, հոլանդացի Ի. Ինգլիարդի և այլոց կողմից կատարած ներդրումները: Անգլիացի գիտնական Լյու Ռուզի «Քաղաքական մշակույթը և քաղաքական զարգացումը» (Օքսֆորդ, 1972 թ.) աշխատությունը՝ որպես քաղաքական մշակույթի կոնցեպցիայի ձևավորման կարևոր փուլ (19 երկրների քաղաքական մշակույթի համեմատման փորձը):

Քաղաքական մշակույթի ինտերպրետացիոնային մոտեցումը (Վիլդավսկի, Թակեր): Ազգային ձևերի և տարբերակների խնդիրների հետ կապված քաղաքական մշակույթի բազմազանությունը: Լ. Պայը ոչ արևմտյան քաղաքական գործընթացների մասին:

Քաղաքական մշակույթը՝ որպես քաղաքական գործունեության բնութագրում, իմացության և գիտակցման աստիճան: Քաղաքական մշակույթի դիտարկումը՝ մի կողմից, որպես հասարակական գիտակցության խտացված արտահայտություն, ազգային կամ խմբային պատմական փորձի դրսևորում, իսկ մյուս կողմից, որպես վարքագծի ձև: Քաղաքագիտական գրականության մեջ առկա քաղաքական մշակույթի սահմանումների դասակարգման չորս մոտեցումները. 1) հոգեբանական, 2) համընդգրկող, 3) օբյեկտիվային, 4) էվրիստիկական:

Ռոնալդ Ինգլիարթի հայեցակարգը քաղաքական մշակույթի «երեք չափումների» մասին՝ «բավարարվածություն», «վստահություն» և «հեղափոխական փոփոխությունների աջակցություն»: «Բավարարվածությունը»՝ որպես կյանքից անհատական բավարարվածության ցուցանիշ: Քաղաքական և միջանձնային «վստահությունը» որպես գործոն, որն ապահովում է ժողովրդավարության կենսունակությունը: «Հեղափոխական փոփոխություններին» աջակցությունը, որպես պատրաստակամություն հասարակական կարգի փոփոխման համար:

## ՍԵՄԻՆԱՐ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ
## ՄՈԴՈՒԼ 2. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ՝ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ (6 ԺԱՄ)

### Թեմա 2.1. «Քաղաքական մշակույթ» հասկացությունը: Պատմություն և արդիականություն (2 ժամ)

1. Քաղաքականության մեկնաբանման հիմնական մոտեցումները:

2. «Մշակույթ» հասկացությունը և էությունը:
3. Քաղաքականության և մշակույթի փոխազդեցության հիմնական ասպեկտները:
4. «Քաղաքական մշակույթ» հասկացությունը. պատմություն և արդիականություն:

**Թեմա 2.2. Քաղաքական մշակույթի մեկնաբանությունները (4 ժամ)**

1. Քաղաքական մշակույթի վերաբերյալ ամերիկյան քաղաքագետներ Գաբրիել Օլմոնդի և Սիդնեյ Վերբայի հայեցակարգը:
2. Քաղաքական մշակույթի մեկնաբանության երեք հիմնական ուղղությունները:
3. Քաղաքական մշակույթի տեսության զարգացումը 1980-1990 թթ.:
4. Ամերիկյան սոցիոլոգ և քաղաքագետ Ռոնալդ Ինգլհարթի պոստմատերիալիստական քաղաքական մշակույթի տեսությունը:
5. Այլընտրանքային մոտեցումներ քաղաքական մշակույթի հետազոտության վերաբերյալ:

## ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. ***Վարդանյան Լ.,*** Քաղաքական մշակույթ // Քաղաքագիտություն: Ուսումնական ձեռնարկ, Երևանի պետ. համալս., - Եր., Երևանի համալս. հրատ., 2006.
2. ***Վարդանյան Լ., Մակյան Խ.,*** Դիտարկումներ «Քաղաքական մշակույթ» եզրույթի ծագման և մեկնաբանության վերաբերյալ, «Վէմ» համահայկական հանդես, 2016, թիվ 4 (56), էջ 210-229:
3. ***Гомеров И.Н.,*** Политическая культура: лекции / Новосиб. гос. ун-т. Новосибирск, 2012.
4. ***Инглхарт Р.,*** Постмодерн: меняющиеся ценности и изменяющиеся общества // Полис, 1997, № 4.

5. ***Инглхарт Р.,*** Культура и демократия // Культура имеет значение. Каким образом ценности способствуют общественному прогрессу / Под ред. Л. Хариссона, С. Хантингтона. М., 2002.
6. ***Мельников А. П.,*** Политическая культура в жизни обещества: учебн. Пособие / А. П. Мельников, С. Ф. Сокол. – Минск: БИП-С Плюс, 2010. – 200с.
7. ***Мельников А. П.,*** Национальные модели политической культуры / А. П. Мельников. – Минск: РИВШ, 2013. – 164 с.
8. ***Михайленок О. М.,*** Региональные особенности российской политической культуры / О. М. Михайленок // Социально-гуманитарные знания. – 2008. -№ 2.
9. ***Орлов Б.,*** Особенности политической культуры социал-демократии / Б. Орлов // Свободная мысль. – 2009. -№ 3.
10. ***Орлов Б.,*** Политическая культура России XX века: учеб. Пособие / И. Б. Орлов. – М: Аспект Пресс, 2008. – 222 с.
11. *Политическая культура: Учебное пособие для академического бакалавриата.* Под ред. Г. Д. Тульчинского. М., Юрайт, 2014.
12. ***Ратина М. Е.,*** Гражданственность как общественно-политический феномен / М. Е. Ратина // Вестник Московского ун-та. Серия 12. Политические науки, 2008. -№ 3.
13. ***Рогозин Э. В.,*** Традиционная политическая культура, ее функции в политических процессах современной России / Э. В. Рогозин // Право и политика. – 2009. -№ 1.
14. ***Скок Н. В.,*** Национальные модели политической культуры / Н. В. Скок. – Могилев: МГУ, 2001. – 230 с.
15. ***Скок Н. В.,*** Политическая культура: теория и методология / Н. В. Скок. – Могилев: ГУ ВПО, «Белорусско-российский ун-т», 2009. – 400 с.
16. *Теория политики: Учебное пособие* / Под ред. Б.А. Исаева. – СПб.: Питер, 2008.
17. ***Almond G.,*** Comparative Political System. – ”Journal of Politics” 18 (August), 1956.
18. ***Almond G., Verba S.,*** The Civil Culture: Political Attitudes and Democracy in Five Nations. Princeton Univ. Press, 1963.
19. ***Inglehart R.,*** Culture Shift in Advanced Industrial Society, Princeton University Press, 1990.

20. ***Inglehart R.,*** Modernization and Postmodernization. N.Y., 1997.

21. ***Pye L.W., and Verba S***. (eds.), Political Calture and Political Devlopment. Princeton Univ. Press, 1965.

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ***Беляева Н. Ю.,*** «Фабрики мысли» и центры публичной политики как субекты экспертниго обеспечения политики / Н. Ю. Беляева // Политика. – 2008. -№ 4.

2. ***Гончаров П. К.,*** Политические ценности в структуре массового политического сознания современного российского общества / П. К. Гончаров // Социология власти. –2009. -№ 1.

3. ***Вольф М.,*** Мораль в политике: Гарве, Кант, Гегель // Право и политика. – 2008. -№ 12.

4. ***Ирхин Ю.В.,*** Социология культуры: учебник / Ю.В. Ирхин. – М.: Экзамен, 2006.

13. ***Козырев Г. И.,*** Политика как общественное явление // Социлльно-гуманитархые знания. – 2005. -№ 1.

14. ***Кононенко Б. И.,*** Гуманизм в культуре / Б. И. Кононенко // Социология власти. – 2008. -№ 6.

5. ***Кудряшова М. С.,*** Гуманизм и политика // Вестник моск. гос-го ун-та. Серия 12. Политические науки. – 2006. -№ 2.

6. ***Кустовский, Н. М.,*** Политические традиции и политическая культура: исторический опыт / Н. М>, Кустовский, Б. М. Соколов // Проблемы управления. – 2009. -№ 2.

7. ***Лукин А. В.,*** Мифы о российской политической культуре / А. В. Лукин, П. В. Лукин // Политические исследования. – 2009. -№ 1.

8. ***Махнач В. Л.,*** Политика. Основные понятия: справочник, словарь. – М.: ОЛМА Медиа Групп, 2008.

9. ***Мухаев Р. Т.,*** Теория политики:учебник для студентов вузов, обучающихся по гуманитарно-социальным дисциплинам (020000) и специальности “Международные отношения” (350200) / Р.Т. Мухаев. – М.: ЮНИТИ-ДАНА, 2005.

10. ***Оболенский А. В.,*** Этика публичной сферы // Общественные науки и современность. – 2008. № 2.

11. ***Павлов Н.,*** Культура-третье измерение внешней политики // Международная жизнь. – 2008. -№ 8-9.

12. ***Поливаева Н.,*** Об эволюции политического сознания в современном мире / Н. Поливаева // Власть. – 2008.
13. ***Славин Б.,*** Как понимать природу политики? // Свободная мысль. – 2008. -№ 9.
14. ***Федоркин Н. С.,*** Политическая культура и коррупция: грани современности / Н. С. Федоркин // Вестник Московского университета. Сер. 18. Социология и политология. – 2008. -№ 3.

### *Հարցեր ինքնուրույն աշխատանքի համար*

1. Քաղաքական մշակույթի ըմբռնումը՝ որպես գիտական եզրույթ:
2. Տվեք քաղաքական մշակույթի սահմանման վերաբերյալ հիմնական մոտեցումների վերլուծությունը:
3. Ո՞րն է քաղաքական մշակույթի նկատմամբ վարքաբանական մոտեցման էությունը:
4. Ի՞նչ է նշանակում «ենթամշակույթ» (քաղաքական) հասկացությունը:
5. Ինչպիսի՞ն է քաղաքական լեզվի դերը հասարակության մշակույթի մեջ:
6. Ի՞նչ է նշանակում «նույնականության ճգնաժամ» հասկացությունը (քաղաքականության և մշակույթի մեջ):
7. Չևակերպեք քաղաքական մշակույթի հիմնական խնդիրները:
8. Ո՞րն է քաղաքական մշակույթի Ռոնալդ Ինգլիարթի «երեք չափումների» հայեցակարգի կիրառական նշանակությունը:
9. Ի՞նչ դեր կարող է ունենալ Ռոնալդ Ինգլիարթի հայեցակարգի ցուցանիշների գնահատականը հայկական քաղաքական մշակույթի հետազոտման գործում:

## ՄՈԴՈՒԼ 3.
## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍ

«Քաղաքական համակարգ» հասկացությունը և նրա մեկնաբանությունները: Քաղաքական մշակույթ հասկացության միջոցով քաղաքական կողմնորոշումների, ազգային բնավորության, մշակութային միջավայրի, քաղաքական փորձի, գիտելիքների

ներկայացումը՝ որպես վերաբերմունք քաղաքականության և քաղաքական համակարգի նկատմամբ: Պ. Շարանի կողմից՝ «Համեմատական քաղաքագիտություն» աշխատության մեջ ներկայացված քաղաքական համակարգի չորս հիմնական բաղադրամասերը. իշխանությունը (որպես նրա միջուկ), շահերը, քաղաքականությունը և քաղաքական մշակույթը: Քաղաքական համակարգի բազադրամասերն ըստ ռուս հետազոտող Վ. Պենկովի. իշխանությունը, քաղաքականության սուբյեկտները, քաղաքական հարաբերությունները, քաղաքական կազմակերպություններն ու ինստիտուտները, ինչպես նաև քաղաքական մշակույթը: Քաղաքական մշակույթի դիտարկումը ռուս քաղաքագետ Ֆյոդր Բուռլացկու կողմից, որպես քաղաքական համակարգի կենտրոնական բաղադրամաս:

Ամերիկյան քաղաքագետ և պատմաբան Ռոբերտ Թակերի եզրակացությունն այն մասին, որ հասարակության քաղաքական համակարգը թափանցում է նրա քաղաքական մշակույթի մեջ, ընդգրկելով քաղաքական գործողության նկատմամբ կողմնորոշման մոդելը, որը հանդիսանում է մշակույթի մի մասը, գոյություն ունենալով մյուսներից առանձին և տիրապետելով որոշակի անկախության:

Քաղաքական մշակույթի ակտիվ ազդեցությունը քաղաքական համակարգի գործառնության և կայունության, քաղաքական գործընթացների վրա:

«Ազատության» և «հավասարության» հարաբերակցությունը: Քաղաքացիների վերաբերմունքը արդարության գաղափարի նկատմամբ: Բնակչության էգալիտար, պատեռնալիստական և լիբերալ կողմնորոշումները:

*Քաղաքական կառավարման մշակույթը:* Քաղաքական կառավարման սուբյեկտը և օբյեկտը: Կառավարչական որոշումների ընդունման տեսությունը: Քաղաքական կառավարման սկզբունքները:

Կառավարչական գործունեության մեջ բյուրոկրատիզմը՝ որպես քաղաքական մշակույթի անտիպոդ (հակոտնյա, հակա-

պատկեր)։ Բյուրոկրատիզմի և բյուրոկրատիայի հիմնախնդիրը քաղաքագիտության և սոցիոլոգիայի մեջ։

